


ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրախոսություն Գառնիկ Ղավթյանի «Հայատյացությունը Աղրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» աշխատության մասին



Երիտասարդ հետազոտող Գառնիկ Ղավթյանի «Հայատյացությունը Աղրբեջանի պետական գաղափարախոսության հիմքում» աշխատությունը համապարփակ ուսումնասիրություն է խնդրի քաղաքական և իրավական բովանդակությունն ապահովելու ուղղությամբ: Այն առաջին փորձերից մեկն է հայատյացության՝ որպես Աղրբեջանի պետական քաղաքականության և դրան ուղղված իրավական զարումների գործիքակազմի ամբողջացման ուղղությամբ: Նեղինակը հատկանշում է, որ այս քաղաքականությունը չի փոխվել անկախ պատճական ժամանակաշրջանից և վարչակարգից, հետևաբար Աղրբեջանում հայատյացության արմատները նույնական են Աղրբեջան պետության տարիքին:

Ուսումնասիրությանը ժամանակու արդյունքում մեր կողմից առանձնացվել են մի քանի նկատառումներ:

Այլատյացության ձևաչափում Աղրբեջանը հայատյացությանը գրեթե համաչափ տանում է իրանատյացության քաղաքականություն: Նետևաբար այստեղ խոսք է զնում պետական մակարդակով անհանդուրժողականության անուր հարթակի գոյության մասին:

Աղրբեջանի Հանրապետության Սահմանադրությունը փաստաթուղթ է, որը հայատյացության իրավական հիմքերը լուսաբանելու դեպքում դադարում է որևէ գործառույթ իրականացնելուց:

Հայատյացության քարոզը Աղրբեջանի Հանրապետությունում հմտորեն գուգակցվում է կրոնական հարցերին: Ըստ այդմ՝ աղրբեջանա-դարաբաղյան հակամարտության ընթացքում Աղրբեջանը ժամանակ առ ժամանակ փորձեր է կատարել խնդիրը տեղափոխել կրոնաքաղաքական հարթակ: Այս տեղեննոցն արտահայտվել է հատկապես 2016 թ. ապրիլյան սրացման շրջանում, երբ խնդիրը տեղափոխելով հայական Համագործակցության կազմակերպություն՝ Աղրբեջանը փորձել է «ցիհաղ» հրահել, քայց և չի ստացել սպասաված աջակցությունը, որովհետև իշխանությունը ոչ բոլոր պետություններն էին հետաքրքրված Աղրբեջանի տարածքային խնդիրներով: Այս առումով հեղինակը ներկայացնում է Հաջի Ալլաշյուքուր Փաշազադեի Կովկասի մուսուլմանների գլխավոր առաջնորդի կոչը, որտեղ հայերի նկատմամբ մեղադրանքները առավել խորություն են հաղորդում անտազոնիզմին:

Նեղինակի կողմից առանձնացվել են հատկապես հայատյացության դրսևորումները դպրոցական դասագրքերում, մասնավորապես ուշադրության է արժանի azerichild.info կայքը, որտեղ տեղադրված նյութերը խախտում են Աղրբեջանի Հանրապետության Սահմանադրության երեխաների մասին օրենքը: Հատկանշական է, որ այլատյացության և հայատյացության դրսւորումները մտահոգության առիթ պետք է լինեն միջազգային իրավապաշտպան կառույցների համար և պետք է արտահայտված լինեն ոչ միայն տարեկան զեկույցների տեսքով, այլև գործնական քայլերով այն կամխարգելելու նպատակ պետք է հետապնդեն: Հատկանշական է, որ հեղինակը հենց այս քաղաքականության հետևանքն է համարում Ռամիլ Սաֆարովի ոճրագործությունը՝ մանրամասն վերլու-

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

Ժուրայան ենթարկելով Ռամիլ Սաֆարովի հերոսացման գործընթացն իր քաղաքական, հոգեբանական, իրավական և քարոզչական ենթատերստերով:

Գառնիկ Ղավյանը, քննելով Աքրամ Ալիխալիի «Քարե երազներ» գիրքը և նրա արձագանքները ադրբեջանական պետական և հասարակական դիսկուրսում, հակասություն է տեսել Ադրբեջանի Սահմանադրության Ստեղծագործական ազատության մասին 51-րդ հոդվածի հետ:

Ղավյանի աշխատության մեջ քննարկվել է «Օտարերկրյա քաղաքացիների անօրինական մուտքը Ադրբեջանի Յանրապետության օկուպացրած տարածքներ» կամ «Աև ցուցակը», ինչը հակասում է Ադրբեջանի կողմից միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին: Յեղինակն անդրադառնում է նաև «Աև ցուցակից» «Ներողության երկտողով» դուրս եկածներին:

Ղավյանի կողմից վերլուծությունն է իրականացվել 2017 թվականին ՌԴ և Խորայի քաղաքացի բլոգեր Ալեքսանդր Լապշինի Բելառուսի մայրաքաղաք Մինսկում Ադրբեջանի իշխանությունների խնդրանքով ծերորակալվելու և Ադրբեջանի Յանրապետություն արտահաննելով դեպքի ուղղությամբ: Յեղինակը դրանք քննարկել է ոչ միայն Ադրբեջանի Յանրապետության Սահմանադրության, Ադրբեջանի Յանրապետության Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան կետերի խախտման փաստերն արձանագրելով, այլ նաև վկայակոչելով միջազգային իրավունքի համապատասխան փաստաթղթերը:

Ընդհանրացնելով աշխատությունը՝ կարող ենք եզրակացնել, որ հեղինակը խնդիրը քննարկել է ուղղակի հակասությունների տիրույթում, ինչն էլ իր հերթին ցույց է տալիս, որ Ադրբեջանի գործելակերպ հակասում է թե սեփական պետության օրենսդրությանը և թե՝ միջազգային իրավունքին: Գնահատելի են հեղինակի ուղղորդումները բարձրացված խնդիրներին, մասնավորապես վկայակոչումները Եվրոպական Միության և ՄԱԿ-ի կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերին: Այսայս ացությունը համաշխարհային մակարդակով ահազնացող ծավալներ է ընդունում, և անհրաժեշտություն կա որպես առանձին գիտածոլող նրա խորքային և բազմադիսցիպլինար ուսումնասիրության: Իրականում այլատյացությունը կարող խնդիր դառնալ առաջին հերթին հենց Ադրբեջանի համար, ապա նաև Ադրբեջանի հետ խնդիրներ ունեցող պետությունների համար: Յետևաբար խնդիրը տարածաշրջանային անվտանգության հարթակում է:

**Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Նելլի Բաղդասարյան**